

# ՅԱԻԵԼԵԱԼ ՓԱՍՏԱՐԿՆԵՐ՝ ԿԻԼԻԿԻՈՅ ՀԱՅՈՑ ՈՍԿԵԴՐԱՄՆԵՐՈՒ ՎԱԻԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ

ԵՂԻԱՆԵՐՍԷՍԵԱՆ

Կիլիկիոյ Հայոց ոսկեղրամներու վաւերականութեան խնդիրը լուրջ հարցումներ ստեղծած է: Անցեալին, անոնց վաւերականութեան վերաբերեալ որոշ ապացոյցներ հաւաքուած են: Այս խնդրով գրադած ու քննութիւններ կատարած են Բրիտանական Թանգարանը, ինչպէս նաեւ անհատ դրամագէտներ Փոլ Բալոզ, Ջարեհ Պտուկեան, Կուսթաւ Շլումբերգէ, սոյն յօդուածին հեղինակը, եւլն.<sup>1</sup>:

Հայր Կղեմէս Սիպիլեանի, Ջարեհ Պտուկեանի եւ սոյն յօդուածին հեղինակի եզրակացութիւնն այն է, թէ այս ոսկեղրամները կոխուած են իբրեւ յուշադրամներ, դրուագուած՝ յիշատակելու որոշ դէպք մը կամ՝ թագաւորին կողմէ ընծայուելիք յուշանուէր մը եղած են քան՝ թողարկուած արծաթ դրամներու նման շրջանառութեան թէ վաճառականական ձեռնարկներու ծառայող: Հետեւաբար, բոլորն ալ կը պատշաճին Կիլիկեան Հայաստանի դրամագիտութեան կառոյցին:

Մարդ կը մղուի ենթադրելու, թէ ոսկեայ յուշադրամ մը պէտք է ըլլայ սեփականութիւնը չափազանց բարձր ու եզակի պաշտօնակատարի մը, կամ ալ պէտք է պահպանուի յատուկ շէնքի մը, ինչպէս՝ արքայական պալատի, կաթողիկոսարանի կամ ալ թանգարանի մը մէջ: Ուստի, երբ երկիր մը գրաւուի թշնամի բանակի կողմէ, նման շէնքերը պիտի ըլլան կողոպուտի առաջին թիրախները:

Լեւոն Ա. (1198-1219) թագաւորի ոսկեղրամներու՝ իբրեւ պատերազմական ակար Եզիպտոս տարուելը փաստելէ առաջ, համառօտակի քննենք Կիլիկիոյ վրայ մամլութիւններու<sup>2</sup> կատարած բոլոր յարձակումներն ու պատերազմները:

**ՄԱՄԼՈՒՔՆԵՐՈՒ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ ԿԻԼԻԿԻՈՅ ՎՐԱՑ (1266-1375)**

Հնքում Ա. (1226-1270)

Եզիպտոսի մամլուք Սուլթան Պիպարս Ա. (1260-1277) Կիլիկիոյ վրայ յարձակած է 1266ին: Հեթում Կիլիկիայէն մեկնած ըլլալով, իր երկու որդիները՝ Լեւոն եւ Թորոս, աճապարանքով բանակ մը կազմած են թշնամիին դէմ: Պատերազմի ընթացքին, Թորոս սպաննուած է, իսկ Լեւոն՝ գերի ինկած մամլութիւններուն ձեռքը (24 Օգոստոս 1266): Մամլութիւնները այրած են Սիս մայրաքաղաքի տաճարը, կողոպտած եւ աւե-

րած են երկիրը: Հեթում՝ հարկադրուած, շատ ծանր հաշտութիւն մը կնքած է սուլթանին հետ, եւ Լեւոն՝ ազատ արձակուած<sup>3</sup>:

Լեւոն Բ. (1270-1289)

1274ին, առանց որեւէ պատրուակի, Պիպարս մեծ բանակով մը յանկարծակի յարձակած է Կիլիկիոյ վրայ: Մամլուքները գրաւած են Մամիսթրան (Միսիս) եւ ժողովուրդը սուրէ անցուցած: Ըստ հայ պատմաբաններու, Սիս մայրաքաղաքը դիմադրած է հերոսաբար եւ ամբողջովին երբեք չէ յանձնուած: Գլխաւոր պետական դրամահատարանը Սիսի մէջ էր: Երբ Տարսոն գրաւուած է, հոն գտնուող թագաւորական պալատն ու Մ. Սոֆիա տաճարը կողոպտուած եւ ապա հրկիզուած են, պետական գանձատունը՝ կողոպտուած, տասնհինգ հազար մարդ՝ սուրէ անցուած եւ տասը հազար մարդ՝ Եգիպտոս գերեզմարուած: Այս նաւահանգիստը գրաւուած է առանց դիմադրութեան եւ ամբողջ հայ ու ֆրանկ բնակչութիւնը՝ ջարդուած:

Մոնղոլ իշխաններէն Մանկու-Թիմուր 50,000 հոգինոց բանակի մը գլուխը անցած, մտած է Սիւրիա, ճակատելու Եգիպտոսի սուլթանին դէմ, Հոմսի դաշտերուն մէջ, 1281ին: Լեւոն, հաւատարիմ մնալով մոնղոլներու հետ իր դաշինքին, 25,000 զինուորներով միացած է մամլուքներու դէմ: Հայ ու մոնղոլ դաշնակիցները պարտուած են եւ յաղթական թշնամի բանակը մտած է Կիլիկիա: Յ Յունիս 1285ին, Լեւոն ստիպուած եղած է ընդունիլ եւ ստորագրել խաղաղութեան դաշինքի պայմանները, որոնք չափազանց ծանր եւ նուաստացուցիչ էին:

Հեթում Բ. (1289-1293, 1295-1296, 1299-1305), Թորոս (1293-1295), Սմբատ (1296-1298), Կոստանդին Ա. (1298-1299), Լեւոն Գ. (1301-1307)

Լեւոն Բ. ի հինգ որդիները՝ Հեթում, Թորոս, Սմբատ, Կոստանդին եւ Օշին նստած են Հայկական Կիլիկիոյ գահին վրայ: Հեթում Բ. յաջորդած է Լեւոն Բ. ին: Իր ընդմիջուած երեք գահակալութեանց շրջանները լի են ներքին ու արտաքին վէճերով ու պայքարներով:

1292ի գարնան, Եգիպտոսի ալ-Աշրաֆ Սալահ ալ-Դին Խալիլ (1290-1293) մամլուք սուլթանը արշաւած է Հռոմկլայ, որ Հայաստանեաց Առաքելական Եկեղեցւոյ կաթողիկոսանիստ քաղաքն էր: Բերդն ու մէջի ժողովուրդը դիւցազնաբար դիմադրած են երեսուներեք օր: Ապա, վանականներու մեծ մասը սպաննուած, իսկ Ստեփանոս Գ. Կաթողիկոսը գերեզմարուած է Եգիպտոս: Եկեղեցւոյ թանկագին անօթներն ու սրբութիւնները կողոպտուած են եւ նոյնպէս՝ Եգիպտոս տարուած:

1293 Մայիսին մամլուքները դարձեալ արշաւած են Կիլիկիա: Հեթում Բ. հարկադրուած բանակցած ու խաղաղութեան դաշինք կնքած

է, գիջելով իր երկրի արեւելեան կողմէն բազմաթիւ բերդեր: Մամուլքները վերադարձուցած են գերիներուն մէկ մասը, եկեղեցական թանկարժէք անօթներն ու մասունքները:

1298ին, ալ-Մանսուր Հուսամ ալ-Դին Լաճին (1296-1299) սուլթանի իշխանութեան շրջանին<sup>5</sup>, եգիպտացիք, օգտուելով հայոց ներքին շփոթէն, Կիլիկիա ներխուժած են ու գրաւած տասնմէկ բերդեր, աւերած են երկիրը եւ կողոպտած զայն: Թշնամի յաղթական բանակը մնացած է այնտեղ՝ մինչեւ հայոց դաշնակից մոնղոլ բանակի օգնութեան հասնիլը:

1299ին, Հեթում Բ. 5,000 զինուորներով օգնելով իլխան գօրավար Ղազան Սանին, եգիպտացի մամուլքներուն վրայ մեծ յաղթանակ մը տարած է Սիւրիոյ մէջ, Հոմսի մօտ: Հեթում կրցած է վերատիրանալ Թէլ-Համտունին եւ այլ հողերու, զորս Կոստանդին Ա. կորսնցուցած էր: Սակայն Ղազան Սան շուտով ձգած եւ իր երկիրը քաշուած է: Մամուլքները վերագրաւած են Սիւրիան: Երկրորդ եւ երրորդ ճակատամարտերը տեղի ունեցած են 1301ին եւ 1303ին. հայ ու մոնղոլ բանակները ճգմուած են Դամասկոսի մօտ: Մամուլքները մի քանի անգամ խուժած են Կիլիկիոյ սահմանամերձ շրջանները: 1304ին մոնղոլները իսլամութիւնը ընդունած են: Երբեմնի ոխերիմ թշնամի արարներն ու մոնղոլները հիմա դաշնակիցներու վերածուած են, որմէ հայ ժողովուրդը աւելի պիտի տուժէր:

Օշիւն (1308-1320)

Ալ-Նասիր ալ-Դին Մուհամմադ (1293-1294, 1299-1309, 1310-1341), մամուլք սուլթանը, 20,000 եգիպտացի զինուորներով եւ Գոնիայի թիւրքերուն հետ դաշնակցելով, Կիլիկիա յարձակած է ու յառաջացած մինչեւ Սիս: Այսպէս առանց դիմադրութեան ինկած է անոնց ձեռքը: 1320 Սեպտեմբերին, Օշիւն Պայլը եւ թագաւորին եղբայրը՝ Կոստանդին սպարապետը հայ գօրագունդերով շրջապատած են թշնամիները Այաս նաւահանգիստին մէջ, ջարդած զանոնք, իսկ մնացածները վտարած են Կիլիկիայէն դուրս<sup>6</sup>:

Լեւոն Դ. (1320-1342)

1322ին, ալ-Նասիր ալ-Դին Մուհամմադ կազմած է դաշնակցութիւն մը մամուլքներու, թաթարներու, եւ թուրք խաչնարածներու հետ, եւ յարձակելով Կիլիկիա, ստիպած է Լեւոն Դ. թագաւորը ստորագրել խաղաղութեան դաշինք մը՝ տասնհինգ տարուան համար: Դաշինքին նուաստացուցիչ պայմաններն էին. վճարել տարեկան 1,200,000 թագուորին իրրեւ տուրք, ինչպէս նաեւ՝ Այասի նաւահանգիստի եկամուտին կէսը, աղահանքերուն եկամուտին կէսը, Եգիպտոսին յանձնել՝

Ճիհուն գետի արեւելեան կողմի բոլոր հողերը: Իբրեւ պատերազմական տուգանք տրուած Կիլիկիոյ արծաթեայ հայ դրամները կրկնադրոշմուեցան եւ մամլուքներու կողմէ շրջանառութեան մէջ դրուեցան որպէս օրինաւոր իսլամական դրամներ<sup>7</sup>:

1331ին ալ-Նասիր ալ-Դին յարձակած է Կիլիկիա, աւերած՝ քաղաքներ ու գիւղեր, հետը տարած բազմաթիւ գերի ու պատերազմական աւար<sup>8</sup>:

#### Կոստանդին Գ. (1344-1363)

Կոստանդինի թագաւորութեան շրջանին Այաս նաւահանգիստը ինկած էր մամլուքներուն ձեռքը եւ կացութիւնը օրէ օր աւելի յուսահատական կը դառնար: Շնորհիւ Հռոդոսի կարգապետ Դիէօդոնէ դը Գոզոնի ռազմական աջակցութեան, Կոստանդին յաջողած է վերագրաւել Այասը (1347), բայց յաջորդ տարի՝ վերջնականապէս կորսընցուցած զայն:

1355ին եգիպտացի մամլուքները կը ներխուժեն Կիլիկիա: Անոնք կը գրաւեն Տարսոն եւ Ատանա քաղաքները եւ մեծ աւարով կը վերադառնան Սիւրիա:

1360ին, Եգիպտոսի սուլթան Մելիք ալ-Նասիր ալ-Դին Հասան (1347-1351, 1354-1361) արշաւած է Կիլիկիա, տիրացած է երկրի հարաւային մասին, ու հետը տարած է մեծաքանակ աւար եւ հարստութիւն: Պտուկեան կը յիշէ, թէ երբ մամլուքները 1360ին Տարսոն քաղաքը գրաւեցին, տեղւոյն դրամահատարանը գործածեցին եւ իսլամական դրամ կոխեցին Տարսոն անուամբ<sup>9</sup>:

#### Լեւոն Ե. (1374-1375)

Միացեալ թրքական եւ եգիպտական բանակ մը յարձակած է Սիսի վրայ: Այն ժամանակ ալ-Աշրաֆ Նասիր ալ-Դին Շապան Բ. Եգիպտոսի սուլթանն էր: Սիս քաղաքի բերդը պաշարուած է 30,000է աւելի մամլուք զինուորներէ եւ Լեւոն վիրաւորուած է: 14 Ապրիլ 1375ին, Լեւոն, տարիէ մը պակաս իշխելէ յետոյ, յանձնուած է թշնամիին երբ եգիպտական բանակի հրամանատարը իրեն, իր ընտանիքին եւ իր հետեւորդներուն ազատութիւն խոստացած էր: Այսպիսով՝ Կիլիկիոյ միջնադարեան հայ պետականութիւնը, որ գոյատեւած էր 205 տարի, աւելի երկար քան որեւէ խաչակրաց քրիստոնեայ այլ պետութիւն, կործանած ու վերջացած է ի սպառ:

#### ՊԱՏՄԱԿԱՆ ԴԷՊՔԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Մամլուք Պիպարսի նպատակը շատ յստակ էր՝ ջնջել խաչակիր իշխանութիւնները Միջերկրականի արեւելեան ծովեզերքէն եւ ձերբա-

գատիլ անոնցմէ: Իբրեւ քրիստոնեայ երկիր, Հայկական Կիլիկիան կը նկատուէր խաչակրութեան մէկ ճիւղաւորումը: 1268ին Անտիոք ինկած էր Պիպարսին ձեռքը: Անտիոքի եւ Թրիփոլիի իշխան Պոհեմոնտին ուղղուած նամակի մը մէջ, Պիպարս կը գրէ.

Մենք Անտիոքը սուրով առինք, Ռամատան ամսու չորրորդ օրը, Շարաթ օրուայ չորրորդ ժամուն: ... Եթէ դուն միայն տեսած ըլլայիր քու ասպետներուդ կոխկրտուիլը մեր ձեռքու սմբակներուն տակ, քու պալատներուդ կողոպուտը, քու գանձերուդ կշռուիլն ու բաժանումը, ձեր կիներուն գնուիլն եւ անոնց ծախուիլը, չորսը մէկ դինարի, եթէ դուն միայն ականատես ըլլայիր քու եկեղեցիներուդ քանդուելուն, քու խաչերուդ կոտորտուելուն, ձեր շքեղօրէն կազմուած Աւետարաններու արեւի տակ դրուած աճուրդին, ձեր ազնուականութեան գերեզմանները՝ կործանած, ձեր Սրբութիւն Սրբոցը՝ կոխկրտուած միւսիւլմաններով, եպիսկոպոսները, քահանաներն եւ սարկաւագները՝ զոհուած խորաններու վրայ, հարուստ մարդիկ՝ վերածուած թշուառութեան եւ արքայական ազնուականներ՝ գերեւարուած, եթէ դուն տեսած ըլլայիր քու դահլիճներուդ հրկիզուիլը, քու մեռեալներուն բոցերուն մէջ նետուիլը (յետ այսու դատապարտուած յաւիտենական բոցերու), Պօղոսի եւ Կոզմայի եկեղեցիները՝ աւերուած ու քար ու քանդ եղած, այն ատեն դուն պիտի աղաղակէիր. «երանի՛ թէ Աստուած զիս փոշիի վերածած ըլլար»: Ոեւէ մէկը չէ փրկուած այս բաները քեզի պատմելու համար: Ուրեմն ես լուրերը քեզի կու տամ<sup>10</sup>:

Ինչ որ Պիպարս սկսած է, իրմէ յետոյ, իր յաջորդները կրցած են վերջացնել՝ հարիւր տարուան ընթացքին ու այդ ալ՝ նուազագոյնս տասը յարձակումներով: Երբ Սիս ինկած է եգիպտացի մամլուքներուն ձեռքը, Գահիրէի մէջ, երեք օր տօնախմբութիւն եղած է: Սիս քաղաքի անառիկ միջնաբերդին իյնալը մամլուքներուն համար կը խորհրդանշէր Միջերկրական Մովի արեւելեան ափին վրայ բոլոր քրիստոնեայ կամ խաչակիր թագաւորութիւններուն եւ իշխանութիւններուն վերջանալը:

Յարձակումի մը ընթացքին, երբ յաղթական էին, Հայկական Կիլիկիոյ թշնամի մամլուք գինուորները սպաննեցին, կողոպտեցին, յափշտակեցին ու Եգիպտոս տարին՝ ինչ որ կրնային իբրեւ պատերազմական աւար ու գերի: Արաբ պատմաբան ալ-Մաքրիզիի համաձայն,

673 Շաբան ամսուն երրորդ օրը (1 Փետրուար 1275) Բիրարս Սուլթանը կը մեկնի դղեակէն եւ կը բռնէ Սիւրիոյ ճամբան. կը մտնէ Դամասկոս: Անկէ կը մեկնի՝ զօրքերու եւ արարներու գլուխ անցած...: Գանձապետը եւ էմիրները, ցամաքէն յառաջանալով, կը գրաւեն Մասիքա քաղաքը եւ անոր բոլոր բնակիչները կը ջարդեն: Կը տանին ջորիներու վրայ բռնուած նաւակներ, որոնք կը ծառայէին Ճիհուն եւ Նահր-Ասվար (Սեւ Գետ) գետերէն անցնելու համար, բայց պէտք չեն ունենար անոնց: Սուլթանը Նահր-Ասվար գետը անցնելէ վերջ՝ կը միանայ երկու էմիրներուն: Բանակը՝ հակառակ ճամբուն վրայ ներկայացուած բազմաթիւ արգելքներու, կը տիրէ լեռներուն, եւ այնտեղ կը ժողովէ գոմէշներու եւ ոչխարներու ահագին կողոպուտ մը: Սուլթանը Սիւս կը մտնէ պատերազմական պատրաստութեամբ եւ այնտեղ հանդիսաւոր տօն կը կատարէ: Քաղաքը կը կողոպտէ: Թագաւորին պալատը կը քանդէ: Անոր արեւնակները եւ պարտէզները կ'աւերէ: Դէպի Տաւրոսի կիրճերը կը դրկէ ջոկատ մը, որ կը վերադառնայ Թաթար գերիներով, որոնց մէջ կը գտնուէին մեծ թիւով կիներ եւ մանուկներ: Տարսոնէն բերել կու տայ 300 ձիեր եւ ջորիներ: Մովի կողմէն դրկուած զօրքը կը տիրանայ բազմաթիւ նաւերու, որոնց նաւաստիները կը կոտորեն: Ուրիշ զօրախումբեր՝ լեռներու մէջ կատարուած արշաւանքներու ընթացքին՝ կը կոտորեն, գերի կ'առնեն եւ մեծ քանակութեամբ աւար կը հաւաքեն: Ջոկատ մը կ'ուղղուի Այաս: Քաղաքը լքուած գտնելով՝ զայն կը կողոպտեն ու բոցերու կը մատնեն. կը սպանուին շատ մարդիկ: Բնակիչներէն 2,000 Թրանկներու Հայեր՝ ապաստանած նաւերը, ծովամոյն կ'ըլլան: Անհաշուելի հարստութիւններ կը հաւաքեն<sup>11</sup>:

Վերի մէջբերումը շատ պերճախօս է. վառ կերպով ցոյց կու տայ, թէ ինչ որ արժէք ունէր եւ կարելի էր փոխադրել՝ տարուած է Եգիպտոս: Իւրաքանչիւր ներխուժման ընթացքին, հայ պալատները, գանձատուները, դրամահատարանները, կաթողիկոսարանը, ինչպէս նաեւ մեծահարուստները կողոպտուած են ամբողջովին: Տրամաբանական է եզրակացնել, թէ կողոպուտի ընթացքին մամլուք գինուորները տարբերութիւն պիտի չընէին հայ կամ օտար արծաթեայ եւ ոսկեայ դրամներուն միջեւ: Ոսկիէ եւ արծաթէ կտրուած դրամները բացառութիւն պիտի չըլլային: Պատմիչ Մեծն Վարդան Բարձրբերդցի կը յիշէ.

Քանզի սուլթանն Մսրայ Փնտխտար անուն խնդրէր գրերդսն՝ զոր Տաթարին ուժովն առեալ էր Հայոց թագաւոր Հեթում: Եւ ՚ի չտալն, աւելի վասն երկեղի Տաթարին, բարկանայր յոյժ, եւ զօրս գումարէ բազում յոյժ, եւ առաքէ ՚ի ձեռն զօրագլխի ուրումն Սմլմօթ անուն յերկիրն Կիլիկեցւոց. որ եւ յանպատրաստից մտեալ յաշխարհն՝ առնու զՄիս մայր քաղաքաց՝ զարքայանիստն, այրէ զնա եկեղեցեօքն որ ՚ի նմա, եւ գտանէ գտունն գետնափոր գանձուցն, եւ առնու յոյժ բազում, զոր ՚ի միում ամանի լինել ասէին վեց հարիւր հազար կարմիր<sup>13</sup>:

Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան թանգարանին մէջ կան երկու ոսկեղրամներ: Մին Լեւոն Ա. թագաւորի կրկնառիւծ ոսկեայ դահեկան մըն է, միւսը՝ Հեթում-Լեւոնի: Ըստ Հայր Օգոստինոս Սեքուլեանի ազնուութեամբ մեզի տրամադրած տեղեկութեան, որ բերանացի իրեն հաղորդուած է վանքի աւագ միաբաններէն, երկու ոսկեղրամներն ալ 1850ականներուն Եգիպտոսէն բերուած են Վիեննայի Մխիթարեան թանգարանը<sup>13</sup>:

Հայկական ոսկեղրամներուն վերաբերեալ մեր յօդուածին տպուելէն ի վեր, յաւելեալ տեղեկութիւն մը յայտնաբերուած է Լեւոն Ա. թագաւորի ոսկեայ կէս դահեկանի մը մասին, որ գտնուեցաւ Լ. Ա. Ադամսի կողմէ<sup>14</sup>: 17 Նոյեմբեր 1885 թուագրուած նամակ մը, ուղղուած Կլասիկալ Նիւմիսմատիկ Գրուպ ընկերութեան եւ ստորագրուած Մուսգէն ունտ Մէյտայլէն ընկերութեան (Պագէլ, Չուլցեբրիա) վարիչ Պեռնհարտ Շուլթի կողմէ, կը յայտնէ, թէ այս ոսկեղրամը գտնուեցաւ 1888ին յայտնաբերուած դրամագիւտի մը մէջ: Յայտնաբերումը կատարուած է Մերձաւոր Արեւելքի մէջ, հաւանաբար՝ Եգիպտոս, կամ ալ մամլուք հողերէն: Դրամագիւտերու վերաբերեալ ներկայ գաղտնապահութեան պատճառով, այս գանձին յայտնաբերման ճիշդ վայրը գաղտնի կը մնայ:

Ըստ Շուլթի վերոյիշեալ նամակով տրամադրած մանրակրկիտ տեղեկութեան, իր դրամագիւտը պարունակած է ուրիշ հայ ոսկեայ կէս դահեկան մը եւս (2-22 գրամ), հատանուած՝ Ադամսի դրամին նոյն գոյգ կաղապարներով:

Պեռնհարտ Շուլթի այս դրամագիւտը պարունակած է 116 հատ ոսկեղրամ, որոնք դասաւորուած են հետեւեալ թագաւորներու անուններուն ներքեւ.

Ճլորենս՝ Փլորիններ կտրուած ժամանակաշրջան՝ 1252-1303  
Վենետիկ՝ 1 դուկատ վերագրուած Ճիովաննի Դանդոլոյի, 1280-1

5 դուկատնոցներ՝ Պիետրո Գրադընիգոյի, 1289-1311  
Մեսսինա՝ 1 դուկատ վերագրուած Ֆետերիկո Արագոնի, 1296-  
1337  
Ռուժի սելջուկներ՝ դինարներ թուագրուած Հ. 673, 676 եւ 682 =  
Յ.Ք. 1283  
Դրամագիւտի մնացածը՝ մամլուքներու դինարներ, ամենա-  
ուշը՝ հատանուած Գահիրէ, Հ. 697 = Յ.Ք. 1297

Շուլթ վերոյիշեալ նամակը կը փակէ հետեւեալ պարբերութեամբ.

Այս տեղեկութիւնը պէտք է կցուի դրամին, որովհետեւ  
շատ կարեւոր է: Ուրեմն ես կը համաձայնիմ, թէ դուն այս  
տեղեկութիւնը տաս դրամը գնողին, եթէ գնող մէկը ըլլայ,  
ինչպէս որ կը յուսամ:

Իր այլ մէկ նամակին մէջ, գրուած Պագէլէն 25 Յունիս 1999ին,  
Շուլթ կը գրէ իր դրամագիւտին մասին.

1988 Դեկտեմբերին, ես գնած են դրամագիւտ մը՝ [որ] ու-  
նեցած է 116 ոսկեղրամ, շատ հաւանաբար յայտնաբերուած  
Եգիպտոսի [մէջ] եւ պարունակած է 17 իտալական, 1 հայկա-  
կան եւ 98 իսլամական դրամներ: Ինծի ծախողը ըսաւ, թէ  
[դրամագիւտին մէջ] կար երկրորդ հայ ոսկեղրամ մը նոյն  
երեւոյթով եւ ծանրութեամբ, սակայն ինք պահել ուզեց իր-  
րեւ յիշատակ, բայց ետքը ծախեց Տրանկ Սթրոնպըրկի: Այն  
ատեն ես պատրաստեցի բոլոր դրամներուն լրիւ ցանկը: Քա-  
նի որ դրամներուն մեծամասնութիւնը կրնան ճշգրտու-  
թեամբ թուարկուիլ, դրամագիւտի կարգադրումին վերջին  
սահմանն է Յ.Ք. 1298, ինչպէս որ կրնաս տեսնել ներփա-  
կուած ցանկէն: Այս իրողութիւնը գիտնալ շատ կարեւոր է  
մէկէ աւելի պատճառներով: Նախ, այս երկու հայ ոսկեղրամ-  
ներու համար մենք վստահօրէն գիտենք սկզբնաղբիւրը եւ  
կասկած չի կրնար ըլլալ իրենց վաւերականութեան մասին:  
Երկրորդ, այս երկու դրամները չափազանց լաւ վիճակի մէջ  
են, այնպէս ինչպէս որ էին իրենց հատանուած ատեն, եւ՝  
կտրուած նոյն գոյգ կաղապարներէն:

Այս հայ ոսկեղրամները կրնան վերագրուիլ Լեւոն անուանով թա-  
գաւորի մը, որ իշխած է 1298էն առաջ: Վերջինս պէտք է ըլլայ կա՛մ  
Լեւոն Ա. կա՛մ ալ Լեւոն Բ.: Եթէ հայ ոսկեղրամները հատանուած

ըլլային շրջանառութեան համար՝ արծաթ դրամներուն նման, մարդ՝ հիմնուած այս դրամագիւտին վրայ, պիտի որոշէր զանոնք յատկացնել Լեւոն Բ-ին: Սակայն իրականութիւնը այդ չէ: Քանի որ հայ ոսկե-դրամները դրուագրուած են իբրեւ յուշադրամներ, յիշատակելու որոշ դէպք մը եւ պատկերատիպն ալ նման է Լեւոն Ա-ի դրամներու պատկերատիպին, մեր համեստ կարծիքն է, թէ այս զոյգ դրամները պէտք է վերագրուին Լեւոն Ա-ին:

Վիեննայի Միսիթարեան Միաբանութեան զոյգ ոսկիներուն սկզբնաղբիւրն են Եգիպտոսը կամ մամլուք հողերը: Լեւոն Ա-ի ոսկեայ կէս դահեկաններուն սկզբնաղբիւրը նոյնպէս Եգիպտոսն է կամ մամլուք հողերը: Մարդ միմիայն կրնայ եզրակացնել, թէ այս չափազանց հագուագիւտ դրամները տարուած են Եգիպտոս մամլուքներու կողմէ իբրեւ պատերազմական աւար: Դրամագիւտը հաւանաբար մամլուք հողամասին մէջ թաղուած՝ էր մամլուք ոսկեայ դիներներու հետ միատեղ, ամենաուշը թուագրուած Է. 897/1297 կամ 1298 Յ.Ք.: Դրամագէտը միայն կրնայ ենթադրել, թէ գանձին պահուիլը կատարուած է մամլուք դիներին հատանումէն մէկ կամ երկու տարի ետք, որ կը համապատասխանէ Հայկական Կիլիկիոյ Կոստանդին Ա. թագաւորի գահակալութեան շրջանին: Դրամագէտին համար գանձին պահուելուն թուականը շատ կարեւոր է: Դրամագիւտի մը մէջի թուագրուած դրամները այս ուղղութեամբ շատ կարեւոր աղբիւր են: Դրամագէտին համար գանձին սկզբնաղբիւրը շատ իմաստային է: Գանձին թուագրուած դրամներն ու սկզբնաղբիւրը միատեղ կը վերցնեն գաղտնիքներու շղարշը պատմութեան մութ էջերուն վրայէն: Անհաւանական չէ ենթադրել, թէ օրին մէկը «նոր» հայական դրամներ յայտնաբերուին Եգիպտոսէն կամ մամլուք հողերէն, ինչպէս որ յայտնաբերուեցաւ Կոստանդին Ա. թագաւորին չափազանց հագուագիւտ դրամը, անուր-դով ծախուած՝ Սլոքումի հաւաքածոյին մէջ<sup>55</sup>:

Երբ նկատի առնուի, թէ երկու ոսկեայ դրամներ մամլուքներու երկրէն ճամբորդեցին Վիեննա, թէ մամլուքներու հողերն են երկու ոսկեայ կէս դահեկաններու, ինչպէս նաեւ Կոստանդին Ա. թագաւորի հագուագիւտ արծաթեայ դրամի մը սկզբնաղբիւրը, դրամագէտ մը կրնայ միայն եզրակացնել, թէ այս հայ ոսկեդրամները Եգիպտոս տարուած են իբրեւ պատերազմական աւար եւ վաւերական ոսկեդրամներ են, կտրուած՝ իրենց տիրակալ թագաւորի իշխանութեան շրջանին:

- <sup>1</sup>Ծ. Թ. Ներսիսյան, «Հաշուեկշիռ Կիլիկիայ Հայոց Ոսկեդրամներու», տե՛ս՝ Հայ Դրամագիտական Ուսումնասիրութիւններ, (Առա Անճեյոս, 2000)՝ արտատպուած Հայ կազմեան Հայագիտական Հանդէս, հ. ԺԸ., 1998, էջ 57-73էն.
- <sup>2</sup>Մամուլը բաւը, արաբերէնէ թարգմանուած, կը նշանակէ ստացուածք. Մամուլները Եգիպտոսի մէջ առեւանգուած մանուկներու եւ գերիներու սերունդներէ բունի մահմետականացած զինուորական դասակարգ մը կը կազմէին, որ երկիրը կը կառավարէր (1250-1517). Մամուլներու ամփոփ պատմութեան համար տե՛ս՝ Paul Balog, 'A Brief Survey of Mamluk History', *The Coinage of the Mamluk Sultans of Egypt and Syria*, New York, 1964, pp. 5-44. էջ 11ի մէջ Բայոզ ունի մամուլներու պատմութեան վերաբերեալ համառօտ մատենագիտութիւն մը.
- <sup>3</sup>V. M. Kurkjian, *A History of Armenia*, New York, 1959, pp. 246-247. Ժագ դը Մորզան, Հայ Ժողովրդի Պատմութիւնը, Պոսթըն, Հրատարակութիւն «Հայրենիք»ի, 1947, էջ 267-268. Sirarpie Der Nersessian, 'The Kingdom of Cilician Armenia,' տե՛ս՝ K. M. Setton (editor), *A History of the Crusades*, vol. II, Philadelphia, 1962, p. 654; Ani Atamian Bournoutian, 'Cilician Armenia,' տե՛ս՝ Richard G. Hovannisian (ed.), *The Armenian People from Ancient to Modern Times*, vol. I. The Dynastic Periods. From Antiquity to the Fourteenth Century, New York, St. Martin's Press, 1997, p. 286. Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիա, Պատմութեան Ինստիտուտ, Հայ Ժողովրդի Պատմութիւն, հատոր III, Երևան, Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակութիւն, 1976, էջ 708-714. Չարեհ Պ. Պտուկեան, Կիլիկիան Հայաստանի Դրամները (այսուհետեւ՝ ԿՀԴ), Վիեննա, 1963, էջ 12. Y. T. Nersessian, *Armenian Coins and Their Values* (այսուհետեւ՝ ACV), Los Angeles, 1965, pp. 123-124.
- <sup>4</sup>Al-Makrizi, *Histoire des sultans Mamlouks de l'Egypte*, vol. II, Paris, 1837-1845, էջ I, 201-212; Victor Langlois, *Le Trésor des Chartes d'Arménie, ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens*, Venise, 1863, էջ 217-231.
- <sup>5</sup>Հայ Ժողովրդի Պատմութիւն, հ. III, էջ 763.
- <sup>6</sup>Kurkjian, էջ 254-255. դը Մորզան, 278-279. Bournoutian, էջ 288. Պտուկեան, ԿՀԴ, էջ 16-17. Nersessian, ACV, էջ 155. Y. T. Nersessian, 'Angel on King Oshin Coronation Trams', *Armenian Numismatic Studies*, Los Angeles, 2000, pp. 399-407՝ արտատպուած՝ Հայ Դրամագիտական Հանդէս, Ա. շրջան, հատոր ԻԳ., թիւ 3, Մարտ 1997, էջ 13-18էն.
- <sup>7</sup>Ծ. Թ. Ներսիսյան, «Կիլիկիան Հայաստանի Արաբերէնով Կրկնադրոշմուած Դրամները», Հայկազեան Հայագիտական Հանդէս, հ. Ի. (2000), էջ 151-182.
- <sup>8</sup>Kurkjian, էջ 255-257. դը Մորզան, 279-282. Bournoutian, էջ 288. Պտուկեան, ԿՀԴ, էջ 18. Nersessian, ACV, էջ 158.
- <sup>9</sup>P. Z. Bedoukian, 'Medieval Armenian Coins', տե՛ս՝ *Selected Numismatic Studies*, Los Angeles, 1981, p. 243.
- <sup>10</sup>Kurkjian, էջ 246-247, ծանօթագրութիւն ր.
- <sup>11</sup>Al-Makrizi, հատոր I, Մաս 2, էջ 123, մէջբերուած՝ դը Մորզան, էջ 269-270. Սե. Գեաի արաբերէն անուան տարբեր ձևերով՝ «Նահր-Ասվար» եւ «Նահր-Ասվար» տառադարձուիլը օգտագործուած սկզբնաղբիւրէն է.
- <sup>12</sup>Հաւաքուած Պատմութեան Վարդանայ Վարդապետի, Փարիս, 1908, էջ 162.
- <sup>13</sup>Ներսիսյան, «Հաշուեկշիռ».

<sup>14</sup> Պարին շնորհակալութիւններ Պեռնչարա Շուլթի, որ համբերութեամբ պատասխանեց մեր բոլոր հարցումներուն, եւ Լ. Ա. Աբամսին, որ մեզի արտօնութիւն տուաւ իր անուան դործածութեան համար ու մեզի տրամադրեց վերոյիշեալ նամակին պատճէնը

<sup>15</sup> Sotheby's, Auction, *The John J. Slocum Collection of Coins of the Crusades*, London, 6 and 7 March 1997, pp. 59-99, no. 530. Յուշակարգող պաշտօնեան, հիմնուելով հաւաքորդ Սլոքումի արխիւներուն վրայ, վերած է թէ դրամը շնուած է Գահիրէի մէջ 1963ին: Y. T. Nercessian, 'An Unpublished Tram of King Gosdantin I (1298-1299)', տե՛ս՝ *Armenian Numismatic Studies*, pp. 365-368, արտատպուած՝ *Հայ Գրար-ժապտակի անդէս*, Ա. շրջան, հատոր ԻԴ, թիւ 3, Սեպտեմբեր 1998, էջ 35-37էն:

ADDITIONAL INFORMATION  
ON THE AUTHENTICITY OF CILICIAN ARMENIAN GOLD COINS  
(Summary)

Y. T. NERCESSIAN

The author supports the viewpoint expounded by numismatics Paul Balog, Paul Bedoukian, Gustave Schlumberger and experts at the British Museum that the gold coins from Cilician Armenia are authentic. He provides additional evidence in this regard. The article argues that these gold coins were struck as commemorative pieces to mark certain events or to be presented as royal gifts. They were stored customarily in the residences of dignitaries and in the palaces of rulers and high ranking clergy. These were the principal places that were later looted during the ten separate invasions by the Mamluk armies of Egypt into the land of Cilicia in the 13th and 14th centuries AD. Consequently, many gold coins from Cilician Armenia have been found in collections originating from Mamluk-era Egypt. One such hoard was buried on Mamluk territory, together with Mamluk gold dinars dating from not later than 1297 AD. It thus provides a likely burial date of not earlier than 1298, which corresponds to the reign of King Constantine I in Cilician Armenia.